ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«01» մարտ 2017թ. N636-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 18-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103032917 առ 23.02.2017թ. գրությունը և դեղի պարզ ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել երաշխավորված թվով 4 դեղերը՝ համաձայն հավելվածի:
2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝
1) ինգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.
2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.
3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի մարտի 01-ի
N 636 – Ա հրամանի

Պարզ ընթացակարգով կատարված փորձաքննության եզրակացության հավելված

հ/հ	Առևտրային անվանումը	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	արտադրող ֆիրման	արտադրող երկիրը	գրանցման հավաստագրի իրավատերը	բացթողման կարգը	եզրակացության համարը և ամսաթիվը
1.	Ամբրօքսոլի հիդրոքլորիդ	ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ)	դեղահատեր	30մգ; (20/2x10/) բլիստերում	Էս Այ Սի "Բորշչագովյան քիմիադեղագործական գործարան" ՀԲԸ, 17, Միրա փ., Կիև 03134	Ուկրաինա	Էս Այ Սի "Բորշչագովյան քիմիադեղագործական գործարան" ՀԲԸ, 17, Միրա փ., Կիև 03134, Ուկրաինա	ԱԴ	16483 23.02.2017

2.	Նովոկային	պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ)	լուծույթ ներարկման	5մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ	Երևանի Քիմիադեղ ագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6	Հայաստանի Հանրապետություն	Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստանի Հանրապետություն	Դ	16484 23.02.2017
3.	Նովոկային	պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ)	լուծույթ ներարկման	5մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ	Երևանի Քիմիադեղ ագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6	Հայաստանի Հանրապետություն	Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստանի	Դ	16485 23.02.2017

							Հանրապետություն		
4.	Նովոկային	պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ)	լուծույթ ներարկման	2մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ	Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6	Հայաստանի Հանրապետություն	Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստանի Հանրապետություն	Դ	16486 23.02.2017